



THE WORLD BANK

Working for a World  
Free of Poverty

## ՄԱՍԼՈ ՉԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մամլո հաղորդագրություն  
2009/ECA

### Պատասխանատուներ.

*Երևանում՝ Վիգեն Սարգսյան, Տաթևիկ Մնացականյան,*  
(+374 10) 520-992

[vsargsyan@worldbank.org](mailto:vsargsyan@worldbank.org), [tmnatsakanyna@worldbank.org](mailto:tmnatsakanyna@worldbank.org)

*Վաշինգտոնում՝ Մայքլ Ջոնս (Michael Jones)*  
(202) 473-2588

[Mjones2@worldbank.org](mailto:Mjones2@worldbank.org)

### Համաշխարհային բանկը մեկնարկում է Հայաստանի հետ գործընկերության նոր ռազմավարությունը

**ՎԱՇԻՆԳՏՈՆ, 11 հունիսի, 2009 թվական:** Համաշխարհային բանկի տնօրենների խորհուրդն այսօր քննարկեց Հայաստանի հետ «Երկրի գործընկերության ռազմավարությունը» (ԵԳՈ), որում ներկայացվում են 2009-2012 թվականներին Հայաստանին Համաշխարհային բանկի աջակցությունը ղեկավարող սկզբունքների շրջանակները:

Ռազմավարությունը, որ մշակվել է այնպիսի ժամանակահատվածում, երբ Հայաստանը ցնցվում է համաշխարհային տնտեսական ճգնաժամից, նախատեսում է օգնել Հայաստանին վերականգնել տնտեսության աճը և մեղմել անապահով խավի վրա ճգնաժամի ազդեցությունը: Այն նաև նպատակ ունի աջակցել Հայաստանին առավել մրցունակ տնտեսություն զարգացնել՝ վերջինիս համար առանցքային նախապայման հանդիսացող դիվերսիֆիկացման և կայուն տնտեսական աճի ապահովման միջոցով:

Ռազմավարությունն արտացոլում է Հայաստանի՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից (ՎԶՄԲ) փոխառություններ կատարելու իրավունքի վաստակումը՝ շնորհիվ պայմանավորված վերջին տասը տարիների ընթացքում աղքատությունը հիսուն տոկոսով կրճատելու Հայաստանի ունեցած հաջողության: Ռազմավարությունն ընդգրկում է նաև Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ)՝ Համաշխարհային բանկի խմբի մասնավոր ընկերություններին վարկավորող, մասնավոր հատվածի թևի, գործառնությունները: Բացի վարկավորման գործառնություններից, Համաշխարհային բանկը նաև մի շարք վերլուծական և խորհրդատվական ծառայություններ կմատուցի՝ ի սատարումն Հայաստանի զարգացման օրակարգի:

Հայաստանը մեծապես շահել է համաշխարհային առևտրի և ներդրումների համար բաց լինելու շնորհիվ, և երկրի ապագան սերտորեն կապված է համաշխարհային տնտեսությունում առավել լավ ինտեգրման հետ: Սակայն երկիրը բախվել է իր արտահանման նկատմամբ պահանջարկի շեշտակի անկման, մետաղների գների սրընթաց նվազման և դրամական փոխանցումների ու օտարերկրյա ուղղակի ներդրումների կտրուկ անկման իրավիճակին: Այս ամենը հանգեցրել է 2009 թվականին տնտեսական լուրջ անկմանը, ավելի ցածր հարկաբյուջետային եկամուտների և գործազրկության ու աղքատության ավելացմանը:

*«Համաշխարհային դժվար միջավայրում՝ Հայաստանի առջև միաժամանակ ծառայել են անապահովների վրա ճգնաժամի ազդեցությունը մեղմելու և արագ*

*վերականգման ու կայուն հետճգնաժամային աճի համար հինք ստեղծելու հիմնախնդիրները»,- ասել է Ասադ Ալամը՝ Համաշխարհային բանկի Հարավային Կովկասի երկրների տարածաշրջային տնօրենը: «Այս գործում հաջողության հասնելու համար Հայաստանին օգնելու նպատակով՝ Համաշխարհային բանկն իր ջանքերը մեծացնում է ինչպես լրացուցիչ ֆինանսավորման, այնպես էլ ինտենսիվ երկխոսության միջոցով: Արագացված ընթացակարգերով հաստատված ՄՁԸ երեք ծրագրերը, որ Հայաստանում վերջերս են մեկնարկել, նախապատրաստվեցին կարճ ժամկետներում և արդեն տեղերում աշխատատեղեր ստեղծելու հնարավորություն են տվել»:*

Նոր ԵԳՌ-ը հաստատուն կերպով հիմնվում է Հայաստանի Կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ) վրա, որը կառուցված է երկու հիմնախնդիրների վրա, այն է՝ **մեղմել խոցելիությունները** (կարճաժամկետ հատված) և **ամրապնդել մրցունակություն հետճգնաժամային աճի համար** (երկարաժամկետ հատված): Ռազմավարության շրջանակում Համաշխարհային բանկի խումբը 670-700 միլիոն դոլար գումարով ֆինանսավորում կտրամադրի Հայաստանին, որից՝ 150 միլիոն դոլարը կլինի ՄՁԸ-ի ցածր տոկոսադրույքով վարկեր, 395 միլիոն դոլարը՝ ՎՁՄԲ-ի վարկավորում և մոտավորապես 120-160 միլիոն դոլարը՝ ՄՖԿ-ի միջոցով կուղղվի մասնավոր հատվածին:

**խոցելիությունների** մեղմման նպատակով Համաշխարհային բանկը Հայաստանի բյուջեին կօժանդակի Ջարգացման քաղաքականության գործառնությունների միջոցով՝ օգնելով պաշտպանել հիմնական աղքատամետ ծրագրերը և ամրապնդել կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ծրագրերի կառավարումը: Բացի այդ, Բանկը կվարկավորի ծրագրեր, որոնք համայնքներում կարճաժամկետ և միջնաժամկետ աշխատատեղեր կստեղծեն, և այդպիսով երկրում կնվազեցվեն աղքատության աճի ռիսկերը:

**Հետճգնաժամային աճի համար մրցունակությունն ամրապնդելու նպատակով**, Ջարգացման քաղաքականության նույն գործառնությունները կօգնեն գործարար միջավայրի բարելավմանը, ենթակառուցվածքների ոլորտում կանոնակարգման միջավայրի ամրապնդմանը, էներգիայի և բնական պաշարների կայուն օգտագործման ապահովմանը և պետական միջոցների օգտագործման համար հաշվետվողականության, թափանցիկության և արդյունավետության ամրապնդմանը: Բանկը նաև կօգնի ստեղծել գիտելիքահենք տնտեսություն՝ անհրաժեշտ ՏՏ ենթակառուցվածքով և աշխատուժի կրթության բարելավմամբ, կաջակցի ճանապարհների բարելավման միջոցով տրանսպորտային ծախսերի կրճատմանը, էներգիայի հուսալիության և էներգախնայողության բարձրացմանն ու ոռոգման համակարգերի բարելավմանը:

### **Ջարգացման ուղղությամբ Հայաստանի արդյունքները**

**Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման** ծրագրի միջոցով արդեն իրականացվում են ենթակառուցվածքի բարելավման (խմելու ջուր, ոռոգում և այլն) աշխատանքներ, և աջակցություն է ցուցաբերվում գյուղական ավելի բարձր եկամուտների ձևավորմանը՝ ժամանակակից սարքավորումներ (գյուղատնտեսական մեքենաներ, կաթի մթերման սառնարաններ և այլն) տրամադրելով այն ֆերմերներին, որքեր դրանց կարիքն ունեն և փորձարկում են տեխնիկական նորարարություններ: Ավելին, մասնակից ֆինանսական հաստատությունների կողմից շուրջ 100 երկարաժամկետ վարկեր են տրամադրվել ֆերմերներին: ԵԳՌ-ը լրացուցիչ ֆինանսավորում է հատկացրել ծրագրին և նաև նախատեսվում է գյուղատնտեսական հաջորդ ծրագիրը՝ գյուղական մրցունակության ամրապնդման և գյուղական վայրերում սոցիալական խոցելիությունների նվազեցման աշխատանքը շարունակելու նպատակով:

**Սոցիալական ներդրումների հիմնադրամի III** ծրագրի միջոցով ամենաաղքատ համայնքներում համայնքային ներդրումներն օգնել են փոքր ծավալով սոցիալական և տնտեսական հիմնական ենթակառուցվածքի վերականգնմանը: Առայժմ օժանդակություն են ստացել 700 համայնքների կողմից առաջադրված նախաձեռնություններ՝ հասանելի դառնալով մինչև 1.8 միլիոն մարդու: Մինչև ծրագրի ավարտը շուրջ 180 ամենակարիքավոր համայնքներ կօգտվեն ջեռուցմամբ ապահովված վերանորոգված դպրոցներից, մասնագիտացված դպրոցներից, համայնքային կենտրոններից, խմելու ջրի և ոռոգման համակարգերից: ԵԳՌ-ը լրացուցիչ ֆինանսավորում է տրամադրել ենթակառուցվածքի բարելավման և կարճաժամկետ աշխատատեղերի ստեղծման նպատակով, որոնք խիստ անհրաժեշտ են ներկա ֆինանսական ճգնաժամի պայմաններում:

Ֆինանսական ոլորտում, **Փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսավորման մատչելիության ծրագրի** միջոցով փոքր և միջին ձեռնարկությունների համար տեղական բանկերի միջոցով միջնաժամկետ ֆինանսավորում կտրամադրվի՝ օգնելով աշխատատեղերի կորուստները հասցնել նվազագույնի և խթանելով ներդրումներն ու տնտեսական աճը:

**Կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագիրը**, հիմնվելով նախորդ ծրագրերի ձեռքբերումների վրա, բարեփոխումների օրակարգը կընդլայնի՝ ընդգրկելով նախադպրոցական և բարձրագույն կրթության ոլորտները:

Էներգետիկայի նոր ծրագիրը կօգնի էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի հուսալիության և հզորությունների բարելավմանը և հասարակական շենքերում էլեկտրաէներգիայի սպառման նվազմանը: Ոռոգման նոր ծրագիրը կօգնի վերականգնել ոռոգման համակարգերը և ստեղծել ջրօգտագործողների ընկերակցությունների դաշնություններ:

ՄՖԿ-ը նույնպես ֆինանսավորում կտրամադրի մասնավոր հատվածի աճին օժանդակելու համար: Գործարարությանը նպաստող միջավայրի բարելավմանն օժանդակելու նպատակով ՄՖԿ-ը հանդես է եկել խորհրդատվական նախաձեռնությամբ, որը կօգնի Հայաստանում գործարարությամբ զբաղվելու ծախսերի կրճատմանն ու մասնավոր հատվածի մրցունակության ամրապնդմանը: ՄՖԿ-ն կշարունակի նաև խորհրդատվական և ներդրումային ծառայությունների միջոցով բնակարանային ֆինանսավորման զարգացման ոլորտում ներգավաժությունը և ուղղակիորեն կֆինանսավորի չափանիշները բավարարող մասնավոր ընկերությունների և ներդրումներ կկատարի այն ոլորտներում, որտեղ Հայաստանը համեմատական առավելություն ունի:

1992 թվականին Համաշխարհային բանկին և 1993 թվականին ՄՁԸ-ին անդամակցելուց հետո Հայաստանին տրամադրված ընդհանուր միջոցները կազմում են մոտավորապես 1.2 միլիարդ ԱՄՆ դոլար:

- ### -

Հայաստանում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար խնդրում ենք այցելել [www.worldbank.org.am](http://www.worldbank.org.am) կայքէջ:

ՄՖԿ-ի վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար խնդրում ենք այցելել [www.ifc.org](http://www.ifc.org) կայքէջ: